

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(10)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(10)

ԵՐԵՎԱՆ 2022

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ*

Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ.*, *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
Հարություն Մարության, *պ. գ. դ.*
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ.*, *պրոֆեսոր*
Հռիփսիմե Պիկիչյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*
Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*
Համո Սուքիասյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*)
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*)
Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ Բրիտանիա*)

ISSN 1829-0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արման Նալբանդյան

ՇԻԿԱՀՈՂԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 8

Կարեն Թոխաթյան

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՑԱԽ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ
ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ 18

Նժդեհ Երանյան, Համլետ Պետրոսյան

ՏՈՂԻ ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 31

Варданесова Татьяна

КОЛЛЕКЦИЯ СРЕДНЕВЕКОВОГО СТЕКЛА
ИЗ РАСКОПОК Г. ТИГРАНАКЕРТ В АРЦАХЕ 41

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գոռ Ղազարյան

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ 1920 – 1921 ԹԹ. 46

Մայա Գրիգորյան

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ
20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 58

Միրանույշ Առաքելյան

ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ
«СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН
КАВКАЗА» (СМОМПК 1881-1915) ՌՈՒՍԱԼԵԶՈՒ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԷՋԵՐՈՒՄ 68

Վանիկ Վիրաբյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ 1920 Թ.
ԱՊՐԻԼԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ
ԳՈՐԾՈՂ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 77

Միհեր Քումունց

ՂՈՒԿԱՍ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ «ԴԱՎԻԹ ԲԵԿ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՂԱՓԱՆՑՈՑ»-Ի ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 93

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վեռա Բոյան
ՍՅՈՒՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ
(ԸՍՏ ԴՐԱՄԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԻ) 108

ԱՂԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լիլիա Ավանեսյան
ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԻ ՆՄՈՒՇՆԵՐ
(19-ՐԴ–20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 118

Կարինե Բազեյան
ԱՐՑԱԽԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋ 129

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անուշ Սաֆարյան
ԱՐՑԱԽԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 138

Նարինե Շամամյան
ՌԱԶՄԱՊԱՐԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ
(ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ) 145

Արմինե Շահբազյան
ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՍՅՈՒՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԿԻՆՈԱՐՎԵՍՏՈՒՄ 155

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մեդա Գալստյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ 168

Համլետ Պետրոսյան
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ 183

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ 189

Գոռ Ղազարյան
Երևանի պետական համալսարան
gor.ghazaryan1998@gmail.com

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ 1920 – 1921 ԹԹ.*

Հիմնաբառեր. Արցախ, Սյունիք, Գարեգին Նժդեհ, Դրո, գոյապայքար, Արցախյան ազատամարտ, Զանգեզուր:

Երբեք առանց Սյունիքի և Արցախի,
առանց Հայաստանի աշխարհագրական այդ ուժեղ ողնաշարի,
մեր ամբողջական Հայրենիքը գոյություն ունենալ չի կարող:
Գարեգին Նժդեհ

1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմի փլուզման հետևանքով առաջին անգամ պատմության ասպարեզ մուտք գործեց «Ադրբեջան» կոչվող արհեստածին պետությունը, որը հենց սկզբից սկսեց հավակնել պատմական Հայաստանի բաղկացուցիչ մաս հանդիսացող հայկական երկրամասերին՝ Արցախին, Սյունիքին, Նախիջևանին: 1918 – 1921 թթ. մուսավաթական, ապա Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունները փորձում էին ամեն գնով իրականացնել իրենց զավթողական ծրագրերը:

1920 թ. գարնանից մինչև 1921 թ. ամառը Գ. Նժդեհը հնարավորության դեպքում սատարել է Արցախի ազատագրական պայքարին՝ փորձելով երկրամասը Սյունիքի օրինակով միացնել Հայաստանի Հանրապետությանը: Որոշ դեպքերում նա անձամբ է իր զինվորներով անցել Արցախ և վարել ռազմական գործողություններ: Իր աշխատություններում՝ «Ազատ Սյունիք», «Ինչու պայքարեց Լեռնահայաստանը», «Լեռնահայաստանի գոյամարտը», «Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից», «Իմ պատասխանը» և այլն, Գ. Նժդեհը բազմիցս անդրադարձել է Արցախում տեղի ունեցող ռազմաքաղաքական անցքերին: Նրա հաղորդած տեղեկություններն արժանահավատ և կարևոր աղբյուր են Արցախի պատմության նշված ժամանակահատվածի ուսումնասիրման համար:

Սույն հոդվածում ի մի է բերվել Գարեգին Նժդեհի աշխատություններում տեղ գտած պատմագիտական արժեք ունեցող այն վկայությունները, որոնք վերաբերում են 1920 – 1921 թթ. Արցախում ծավալվող ռազմաքաղաքական իրադարձություններին: Պատմահամեմատական մեթոդով ցույց է տրվել դրանց առընչությունները համաժամանակյա պատմական այլ աղբյուրների հետ: Վերլուծությունների արդյունքում փորձ է արվել ուրվագծել Գ. Նժդեհի աշխատությունների կարևորությունն Արցախի պատմության վերոնշյալ ժամանակահատվածի ուսումնասիր-

* Ստացվել է 19. 08. 2022 թ., ուղարկվել է գրախոսման 02. 09. 2022 թ., ընդունվել է տպագրության 18. 11. 2022 թ.:

ման համար, ինչպես նաև ներկայացնել Գարեգին Նժդեհի կարևոր դերակատարումն Արցախահայության գոյապահպանման գործում:

1919 թ. օգոստոսին Գ. Նժդեհը ՀՀ կառավարության կողմից նշանակվում է Կապանի, Արևիքի և Գողթանի (Կապարգողթ) զորքերի ընդհանուր հրամանատար և անցնում Սյունիք՝ Էդիֆ բեյի զորքերի կողմից պաշարված Գողթանին օգնություն հասցնելու համար: 1919–1921 թթ. Գ. Նժդեհը Սյունիքում ղեկավարում է Զանգեզուրի գոյամարտը:

1920 թ. մարտին Նժդեհը իր զինվորներով անցնում է Կապուտջուղի լեռնանցքը և հասնում Գողթան: Գողթանի բոլոր թուրքական գյուղերը անցնում են հայոց ձեռքը, բացի Արաքսի ափին ընկած Եաջին և Դաստակ թաթարական գյուղերից: Գ. Նժդեհը պաշարում է Օրդուբադ քաղաքը, պատրաստվելով գրավել այն, երբ Ղափանից սուրհանդակ է հասնում՝ տեղեկացնելով, որ թշնամին գրոհել է հայկական դիրքերը և գրավել Զեյվա (Դավիթ-Բեկ) գյուղը: Գ. Նժդեհը ստիպված թողնում է Օրդուբադը և վերադառնալուն պես անցնում հակագրոհի: Նուրի փաշայի և Պրենս Ղազարի զորքերը սարսափահար նահանջում են դեպի Արցախի Փակավան (Խոջահան) գյուղը և Դոնդուրլու (Դոնդարլի)[1]:

Հաղթական հայ հրամանատարությունը վճռում է մեջտեղից վերացնել Զանգեզուրի և Ղարաբաղի միջև գտնվող թաթարական սեպը՝ մոտ 100 գյուղ, և դրանով կենդանի կապ ստեղծել հայկական երկու երկրամասերի միջև (Գէորգեան 1991, 53): Ապրիլի 2-ի լուսաբացին հայկական վաշտերը շարունակում են իրենց հանդուգն գրոհը: Թշնամին խոշոր կորուստներով տեղի է տալիս: Հայկական կողմի ձեռքն է անցնում ադրբեջանական սպայակույտի (շտաբի) արխիվը, որից պարզ է դառնում, որ ադրբեջանական զորամասի մեջ գտնվում են թուրք սպաներ (Նժդեհ 2002ա, 64: Գէորգեան 1991, 53): Գ. Նժդեհի հաղորդած այս տեղեկությունից կարող ենք եզրակացնել, որ տարածաշրջանի հայկական բնակավայրերի դեմ թաթարական զինված ագրեսիան իրականացվում էր ոչ միայն Թուրքիայի բարոյական աջակցությամբ, այլև նրա գործուն մասնակցությամբ:

Կռվի երրորդ օրը կատաղի հարձակումով հայերը գրավում են Որոտանի ձախ ափին փռված 100 թաթարական գյուղերը: «Ապրիլի 2-ի լուսաբացին մեր վաշտերը, Զանգեզուրը Ղարաբաղին միացնելու մի նոր նշանաբանով, շարունակում են իրենց գրոհները: Այդ օրը ռազմագիտական մի լուրջ խաղով հաջողվում է թևանցի ենթարկել հռչակավոր Դոնդարլուն, որի բարձունքներում, գերեզմանատանը և այգիներում ամրացած թշնամու ուժերը տեղի են տալիս, մեծ կորուստով: Կռվի երրորդ օրը հաղթություններով արբեցած մեր վաշտերը մի վերջին խոլական գրոհով թշնամուց մաքրում են Որոտանի ձախ ափին գտնվող բոլոր գյուղերը՝ ամրացնելով իրենց դրոշակը գետափին բարձրացող լեռան կատարին», – գրում է Գ. Նժդեհը (Նժդեհ 2002ա, 64):

Այս գործողություններից հետո կռվի ծանրությունը տեղափոխվում է Շիկահողի շրջան, որտեղ Ասկյուլումի թաթարները, օգնություն ստանալով Զանգելանի (Կովսական) շրջանից, կտրում էին Ղարաբաղն ու Զանգեզուրը: Որոտանի ազա-

1 Թաթարական այս բնակավայրը գտնվել է Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Սահառ գյուղից 1,7 կմ արևմուտք: Այսօր էլ նշմարելի են դրա ավերակները:

տագրված հատվածում թողնելով պահակային փոքր խմբեր՝ Նժդեհը հիմնական ուժերը տեղափոխում է այստեղ: Ապրիլի 6-ին հայկական ուժերը անցնում են հարձակման: Թշնամին, գրեթե պաշարված, դիմում է անկարգ փախուստի՝ թողնելով Ասկյուլումի բարձունքները: Հաջորդ օրը երեկոյան հայկական վաշտերը, գրավելով Ասկյուլումի աջ ու ձախ թևերի վրա ընկած թուրքական գյուղերը, կրակի են տալիս Խոջահանի հարուստ շուկան՝ «կատարյալ հաջողությամբ պսակելով կռիվները այդ ճակատի վրա» (Նժդեհ 2002ա, 66: Գէորգեան 1991, 54):

Զանգեզուրի հարավ-արևելքն ամրացնելու և գրված տարածքները մինչև Արաքսի հովիտ ամբողջացնելու նպատակով Գ.Նժդեհը ձեռնամուխ է լինում Չավնդուրի[2] գործողությանը: Առաջին հարվածը տրվում է այս շրջանի ամենաանհնազանդ Սոբու գյուղին[3]: Թշնամին բարոյալքված նահանջում է դեպի հարավ-արևելք: Գ.Նժդեհի զորքերը ապրիլի 13-ին գրավեցին Շուքյուրդարասի բարձունքը, ապա Բարթազը (Չավնդուր), որտեղ Ջաբրաիլից (Ջրական) և Ղարադաղից թշնամին օգնական նոր ուժեր էր ստացել՝ փորձելով կանխել հայկական զորքերի առաջխաղացումը (Նժդեհ 2002ա, 67: Գէորգեան 1991, 54: Սիմոնյան 2017, 442–443): Որոտանի, Ասկյուլումի և Չավնդուրի կռիվներով Գ.Նժդեհը մաքրում է Ղարաբաղի և Զանգեզուրի միջև ընկած թուրքական սեպը՝ կապ ստեղծելով հայկական երկու երկրամասերի միջև:

Այդ օրերին Մեծ Բրիտանիան վարում էր տարածաշրջանի մահմեդականների համար նպաստավոր քաղաքականություն: Մեծ Բրիտանիան համարում էր Զանգեզուրը և Ղարաբաղը Ադրբեջանի Հանրապետության անբաժան մաս (Գէորգեան 1991, 57):

Զանգեզուրը Գ.Նժդեհի և հայոց պատմական այդ սրբազան լեռնաշխարհի համար մարտնչող բազում քաջորդիների շնորհիվ խորտակել էր դեպի իր սահմաններն արշավող ադրբեջանական բանակները, սակայն Ղարաբաղում պատմաքաղաքական իրադարձություններն այլ կերպ ընթացան: Ադրբեջանական կառավարությունը Զանգեզուրում իր զորքերի կրած ծանր պարտությունների գլխավոր պատճառներից մեկը համարում էր Լեռնային Ղարաբաղը (Հարությունյան 1996, 201): Ուստի մուսավաթականներն ամենք կերպ ջանում էին նվաճել Արցախը, ապա, թեկունքն ապահովելով, պատերազմել Զանգեզուրի դեմ: Ադրբեջանական հայաջինջ և ռազմատենչ քաղաքականությունն այլևս անհանդուրժելի էր դարձել արցախահայության համար:

1920 թ. մարտի 22-ին Ղարաբաղում սկիզբ է առնում ապստամբական շարժում (Իշխանեան 1999, 575): Նույն օրը երեկոյան ադրբեջանական ուժերն անցնում են հարձակման (Բալայան 2002, 302): Դժբախտաբար Ղարաբաղում չկային կանոնավոր զիվորական կազմակերպություններ և բավականաչափ ռազմա-

2 Չավնդուրի (Բարթազ, Բարթութաղ) ավերակներն գտնվում են Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանում՝ Կովսական քաղաքից 14 կմ հարավ՝ Արաքս գետի ձախ ափին:

3 Գյուղ՝ Կապան քաղաքից 26 կմ հարավ-արևելք, անտառապատ վայրում: Ըստ ոմանց՝ համապատասխանում է Սյունիք աշխարհի Կովսական գավառի Ծոբի գյուղին (Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան, 1998, 647):

մթերք (Գէորգեան 1991, 57)։ Ապրիլի 3-ին ադրբեջանական ուժերը գրավեցին Ասկերանի բերդը։ Ասկերանի պաշտպանությունը ղեկավարում էր Դալի Ղազարը[4]։ Քաջակորով ռազմիկը, տեսնելով, որ կռվի բախտը շրջվում է, հեռացնում է հայ զինվորներին դիրքերից, միայնակ առաջանում դեպի թշնամին, սպառում ատրճանակի բոլոր փամփուշտները, վերջինով ինքնասպան լինում (Միքայէլեան 1923, 119–120)։ Կրակի տալով 2 տասնյակ հայ գյուղեր՝ ապրիլի 6-ին ադրբեջանական զորքերը արշավով մտան Շուշի։ Ղարաբաղի վարչական և մշակութային կենտրոնի հրդեհումը և ավերումը անդառնալի կորուստ էին տարածաշրջանի ողջ հայության և ընդհանրապես հայ մշակույթի համար։ Ծանր էր Արցախահայության հոգեբանական վիճակը, ում միակ հույսը շարունակում էր մնալ Զանգեզուրը, որը, չնայած իր ծանր դրությանը և սուղ միջոցներին, ջանում էր ամեն կերպ զորակցել Արցախի գոյապայքարին։

Ապրիլի 8-ին Ղարաբաղը օգնություն է խնդրում Զանգեզուրից։

Զանգեզուրի ռազմական ուժերի հրամանատար գեներալ Ղազարովին (պատճենը Գ. Նժդեհին) ուղղված հեռագրում կարդում ենք.

«Այժմ, երբ Ղարաբաղը բարձրացրել է ապստամբության սրբազան դրոշը և արնաքամ է լինում, պետք օգնել նրան ոչ թե զորամասերով ու դրամական միջոցներով, այլ մի փորձառու առաջնորդով և ռազմամթերքով։ Այդպիսի առաջնորդ այժմ Փոխ-Գնդապետ Նժդեհն է, որի անունը թշնամիների համար դառել է վրեժխնդրության խորհրդանշան, և որի անունից թշնամին սարսափահար փախչում է, ինչպես ցույց տվեցին մոտիկ անցյալի դեպքերը. երբ թշնամու կանոնավոր զորքերը լսեցին Նժդեհի Գողթանից վերադառնալու մասին, խուճապահար փախուստի դիմեցին։ ...Նժդեհը ստեղծված է ժողովրդի համար և նա պիտի լինի այնտեղ, ուր նրա կարիքն ավելի է զգացվում։

Մի խումբ Ղարաբաղցիների ներկայացուցիչներ
Փոխ-Տեղակալ (պոդպորուչիկ – Գ. Ղ.)՝ Հովսեփյան
Զինվորական աստիճանավոր՝ Ռուբէն»

(Գէորգեան 1991, 57–58։ Սիմոնյան 2017, 448։ Բալայան 2021, 39)։

Արցախահայության այս նամակից պարզ է դառնում, որ Ղարաբաղը կարիք ուներ Գ. Նժդեհի նման փորձառու և պրոֆեսիոնալ ռազմական ու պետական գործչի, ով միաժամանակ կվայելեր լայն ժողովրդականություն և կղեկավարեր արցախահայության գոյապայքարը։ Զանգեզուրը անտարբեր մնալ չէր կարող։ Միևնույն ժամանակ, ադրբեջանական հրոսակախմբերի արյունալի ոճրագործությունները կանխելու համար, Հայաստանի կառավարությունը վերջապես կարողացավ ռազմական օգնություն հասցնել Ղարաբաղին։ Գորիս-Ավդալար-Շուշի գծով Ղարաբաղ մեկնեց Դրաստամատ Կանայանի (Դրո) հրամանատարությամբ ձևավորված Զանգեզուր-ղարաբաղյան ռազմարշավային (էքսպեդիցիոն) զորաջոկատը (Սիմոնյան 2017, 461)։

Գալով Շուշի՝ Դրոն հետևյալ կոչն ուղղեց Ղարաբաղի հայ ազգաբնակչությանը.

---

4 Դալի Ղազար (Բաղալքյոխյան Միքայել), 1886–1920 թթ., հայոց ազգային ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի։

«Դու պիտի ըմբռնես, Ղարաբաղի հայ ժողովուրդ, որ Ադրբեջանի ծրագիրն է վերացնել հայ ազգաբնակչությունը, շարունակել իրականացնել թուրքական փաշաների որոշումը, տիրել Ղարաբաղին, ոտքի տակ տալ Զանգեզուրը և ոչնչացնել Հայաստանի Հանրապետությունն ու այդպիսով վերացնել մահմեդական աշխարհի մեջ ընկած այդ քաղաքակրթված ժողովուրդը: ... Միշտ դիրքերի մեջ ու պատրաստ՝ թշնամուն ետ շպրտելու և մեր ազատությունը ձեռք բերելու:

Զանգեզուր-Ղարաբաղի հրամանատար Դրո,
26-ին ապրիլի 1920 թ.»

(Սիմոնյան 2017, 461, Գևորգյան 2014, 589–590):

Կարճ ժամանակ անց գրեթե ողջ Վարանդան՝ մինչև Ղարաբուլաղ գյուղը, անցավ Դրոյի ուժերի հսկողության տակ, իսկ Սարուշեն գյուղում հաստատվեց նրա շտաբը (Սիմոնյան 2017, 461–462):

1920 թ. ապրիլի 22-ին Գորիսում տեղի ունեցավ հաղթական զորահանդես, որի ժամանակ Զանգեզուրի ժողովուրդն ինքը պահանջեց օգնության հասնել Ղարաբաղին (Գէորգեան 1991, 58–59): Նժդեհը ապրիլի 23-ին իր ամենաընտիր վաշտերով անցավ Ղարաբաղ և ստանձնեց Դիզակի[5] պաշտպանությունը՝ դրանով չեզոքացնելով Դրոյի զորքի աջ թևին սպառնացող վտանգը (Գէորգեան 1991, 58–59, Համբարձումեան 2003, 17): «Հարավղարաբաղյան» անվանումը ստացած զորաջոկատը Գ.Նժդեհի գլխավորությամբ անցավ Վարանդա և ուղղություն վերցրեց դեպի Շուշի: Այդ ընթացքում ճանապարհի երկու կողմերի գյուղերի թուրք և քուրդ բնակիչները, թողնելով տները, հեռացան տարբեր ուղղություններով, գլխավորապես՝ Պարսկաստան (Սիմոնյան 2017, 463):

Զանգեզուրցիների մուտքը Ղարաբաղ Դրոն դիմավորում է հետևյալ բառերով.

«Շնորհավորում եմ քաջարի զանգեզուրցիների մուտքը Ղարաբաղ, որ ցանկալի րոպեին նրանք օգնության հասան հարազատ Ղարաբաղին: Յուրաքանչյուր զանգեզուրցի թող հիշի, որ կռվելով պատմական Ղարաբաղի լեռներում, դրանով նա կռվում է ամբողջ Հայաստանի և մասնավորապես Զանգեզուրի ազատության և խաղաղության համար: Վստահ եմ, սպաներ և զինվորներ, առաջնորդությամբ ձեր արժանավոր հրամանատար փոխ-գնդապետ Նժդեհի, քաջարի տեղացիների հետ, որ ահա ամբողջ մի ամիս է կռվում են, ոչ միայն կթեթևացնեք Ղարաբաղի հայերի վիճակը, այլ և ձեր կորովի ասպետական գործողություններով կհանդիսանաք Ղարաբաղի հայ ժողովրդի բախտավորության և ազատ գոյության ապագայի գրավականը:

Դրո, 1920, ապրիլի 26»

(Գէորգեան 1991, 59):

5 Դիզակ (Հաղրութ)–Այս շրջանի տարածքը համընկնում է պատմական Արցախի Դիզակի մելիքության տարածքին և աչքի է ընկնում հայկական պատմաճարտարապետական մեծ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հուշարձաններով:

1920 թ. ապրիլի վերջին կտրուկ փոխվում է ռազմաքաղաքական իրադարձությունների ընթացքը տարածաշրջանում: Ապրիլի 28-ին Ադրբեջանը խորհրդայնացվում է: Օգտագործելով քաղաքական իրադրությունը՝, Ադրբեջանը ձեռնամուխ եղավ բոլշևիկների օգնությամբ իրագործել իր վաղեմի երազանքը՝ տիրանալ հայկական Ղարաբաղին և Զանգեզուրին: Ադրբեջանի խորհրդայնացումից ընդամենը երկու օր անց՝ ապրիլի 30-ին, Ադրբեջանի ռազմահեղափոխական կոմիտեն Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերջնագիր հղեց, որով պահանջում էր Ղարաբաղը և Զանգեզուրը: Մայիսի 1-ին Հայաստանի կառավարությանը նույնանման սպառնալից վերջնագիր ուղարկեց նաև 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը, որով կրկին պահանջում էր Ադրբեջանին հանձնել Ղարաբաղն ու Զանգեզուրը: Մինչ Հայաստանի կառավարությունն այս ծանր ռազմաքաղաքական իրադրությունը փորձում էր լուծել խաղաղ բանակցությունների ճանապարհով, Կարմիր բանակը պատրաստվում էր մտնել Ղարաբաղ: Միաժամանակ Ղարաբաղի մուսուլմանական ուժերը միավորվում էին և իրենց հայտարարում Կարմիր բանակի մասեր (Սիմոնյան 2017, 496):

Մայիսի 15-ին Տող գյուղում Գ. Նժդեհը և Արցախում ՀՀ կառավարության ներկայացուցիչ Արսեն Միքայելյանը Դիզակի շրջանի գյուղերի պատվիրակների հետ քննարկում են ստեղծված կացությունը և որոշում. «...ադրբեջանական վերջնագիրը համարել ընդամենը նոր պատրվակ հայերին նոր դժբախտություններ պատճառելու, ...Արարատյան կառավարությունը ընդունել որպես հարազատի ու Զանգեզուրի հետ միասին մտնել Արարատյան Հանրապետության (Հայաստանի Հանրապետություն – Գ. Ղ.) կազմը» (Բալայան 2021, 41 – 42):

1920 թ. մայիսի կեսերին 11-րդ Կարմիր բանակը, իր կազմի մեջ ընդգրկելով նաև Ադրբեջանի Կարմիր բանակի զորամիավորումներ, մոտեցավ Լեռնային Ղարաբաղի սահմաններին: Տեղի հայ բոլշևիկներն ամեն կերպ աջակցում էին երկրամասի խորհրդայնացմանը (Սիմոնյան 2017, 498): Շուտով 11-րդ Կարմիր բանակի 32-րդ հրաձգային դիվիզիան մտավ Շուշի՝ հայտարարելով այն խորհրդային: Դրոյին առաջարկվեց հեռանալ Ղարաբաղից: Մայիսի 24-ին Դրոն իր զինակիցների հետ խորհրդակցություն հրավիրեց Ավետարանոց գյուղում (Զանախչի)՝ հայտնելով, որ Հայաստանի կառավարությունը համաձայնություն է տվել զորքերը հանելու Ղարաբաղից (Միքայէլեան 1923, 126: Սիմոնյան 2017, 499: Գևորգյան 1991, 151): Այս որոշմանը կտրականապես դեմ արտահայտվեց Գ. Նժդեհը, ով հետագայում այն համարել է Արցախի համար ճակատագրական սխալ: Ներկաների վկայությամբ, հայոց պատմության երկու մեծանուն գործիչներ՝ Գ. Նժդեհը և Դրոն, անգամ ընդհարվել են, տարակարծիք լինելով այս հարցի շուրջ, սակայն շնորհիվ ընկերների միջամտության, վերջ է տրվել վեճին (Իշխանեան 1999, 681):

Մայիսի 25-ին, Շուշիում Դրոյի կողմից ստեղծված Ժամանակավոր կառավարչությունը դադարեցրեց իր գործունեությունը (Սիմոնյան 2017, 499): Մայիսի 26-ին Դրոն իշխանությունը հանձնում է բոլշևիկներին՝ բժիշկ Սաքո (Սարգիս) Համբարձումյանի գլխավորությամբ, և Դրոյի զորաջոկատը, Քիրսի վրայով, անցնում է դեպի Խծաբերդ և ապա Զանգեզուր (Միքայէլեան 1923 , 127):

Շուտով ամբողջ Ղարաբաղը դարձավ խորհրդային: «Հունիսի առաջին օրերին երևանյան զորամասը, որի հետ և իմ օժանդակ վաշտերը թողնում են Ղարաբաղը: Անցնելով Զանգեզուր՝ Դրոն մնում է Գորիսում, իսկ ես անցնում եմ Ղափան: Որոշված է պահպանել մեր այդ երկրամասը բոլշևիկյան վարակից ու ներխուժումից»,—գրում է Գ.Նժդեհը (Նժդեհ 2002ա, 71):

Կարո՞ղ էր Նժդեհն իր զորաջոկատով միայնակ մնալ Արցախում՝ կանխարգելելով վերջինիս խորհրդայնացումը: Ադրբեջանի խորհրդայնացման ժամանակ ադրբեջանական բանակի մոտ 20 հազար ուժեր կենտրոնացված էին Ղարաբաղի հատվածում (Սիմոնյան 2017, 468): 1920 թ. օգոստոսի դրությամբ Դրոն իր տրամադրության տակ ուներ 1300 զինվոր, Գ.Նժդեհը՝ 300, գնդապետ Պողոս Տեր-Դավթյանը՝ 120 (Հայրենիք 2007, 4): Խորությամբ քննելով հարցը՝ կարող ենք եզրակացնել, որ Գ.Նժդեհի մոտ 300 հոգանոց զորախումբը ռազմագիտորեն անկարող էր Ղարաբաղում մաքառել Կարմիր-ադրբեջանական բազմահազարանոց բանակի դեմ, քանզի հակառակորդի զորաբանակի թվապես անհամեմատելի գերազանցությունից զատ, էական նշանակություն ուներ նաև ՀՀ կառավարության դիրքորոշումը, Զանգեզուրի անվտանգության հարցը և մի շարք այլ խնդիրներ: Հայաստանում տիրող քաղաքական բարդ իրադրությունը թույլ չէր տալիս երկրի կառավարությանն ամբողջ ներուժը կենտրոնացնել Արցախում:

Գ.Նժդեհի Ղարաբաղ տեղափոխվելուց հետո զգալիորեն թուլացել էր Զանգեզուրի անվտանգությունը, որը կարող էր թշնամու կողմից հարձակման ենթարկվել այլ ուղղություններից: Եվ վերջապես Շուշիի կոտորածը, խորհրդային կոմիսարների քարոզչությունները, քաղաքական գերլարված իրադրությունը հոգեբանական ծանր ազդեցություն էին գործել արցախահայության վրա: Գ.Նժդեհն այս շրջանի իրադարձությունների մասին հետագայում գրում է. «...Հաջող վախճան ունենում են միայն այն կռիվները, որոնք նախապատրաստվում են իմաստությամբ և առաջ տարվում անվարան վճռականությամբ: Իր հերթին Ղարաբաղում ժամանակից առաջ հապճեպով ու խակ վիճակի մեջ պայթեցրած ապստամբությունը, ինչպես և սպասում էի, ունեցել էր մեզ համար աղետալի վախճան: Սև հողերի վերածված Շուշին և մի քանի հազար հայերի դիակները ավելի քան ճնշիչ էին իրենց ազդեցությամբ: Ղարաբաղի ռազմական ձախողանքի պատճառներից մեկն էլ՝ ըստ իս ամենաէականը պիտի համարել ապստամբական գաղափարականության չգոյությունը: Ղարաբաղը հաղթական ցանկությունից զատ, հաղթելու բոլոր տվյալներն ուներ: Հասարակականապես ուժեղ, տեղադրորեն ամուր, գրեթե անառիկ, մեր ժողովրդի այդ հատվածին հաղթելու համար պակասում էր հոգեբանական նախապատրաստությունը միայն: Իսկ այդ բանում, իհարկե, միայն ժողովրդին չէր կարելի մեղադրել» (Նժդեհ 2002ա, 70–71):

Գ.Նժդեհը, սակայն, անկարող էր հաշտվել Արցախի կորստին: Հաջորդիվ նա Ղարաբաղի հետ կապ է հաստատում 1920 թ. նոյեմբերին. «Լեռնային Ղարաբաղի հետ կապված էի դեռ 1920 թ. նոյեմբերի կեսերին, Գորիսը գրավելուց մի քանի օր հետո: Այդ օրերին, որոշ հրահանգներ ստանալու նպատակով, Սյունիք է

անցնում Դիզակի խմբապետ Թևանը[6]: Սրա վերադարձից հետո, Տաթև են հասնում Դիզակի երկու ներկայացուցիչները՝ ղեկավար, ռազմամթերք ու մի զորամաս խնդրելու առաքելությամբ» (Նժդեհ 1999, 95–96): Սպարապետը բավարարում է Դիզակի ներկայացուցիչների խնդրանքը և ապստամբների առջև խնդիր դնում ազատագրել ու Զանգեզուրին միավորել ամբողջ Ղարաբաղը (Բալայան 2021, 45):

1921թ. հունվարի առաջին օրերին Բաքվից 11-րդ բանակի և Դրոյի կողմից Սյունիք է հասնում Գրիգոր Վարդանյանի գլխավորած խորհրդային մի պատվիրակությունը հետևյալ առաջարկություններով. Սյունիքը հայտարարել խորհրդային, դադարեցնել ապստամբական կռիվները Ղարաբաղում և այլն: Գ. Նժդեհն առաջ է քաշում հետևյալ պայմանները՝ առանձնակի կարևորելով Արցախի հարցը. «Հայ մտավորականությունն արձակվում է բանտերից, Սյունիքը և Ղարաբաղը կցվում են Հայաստանին, թուրքերը քաշվում են գոնե Շարուրից և Ալեքսանդրապոլից, որից հետո ես անցնում եմ արտասահման՝ բանալով խորհրդային իշխանության առաջ մեր լեռնաշխարհի դռները» (Նժդեհ 2002բ, 118):

1921 թ. հունվարի 7-ին Գ. Նժդեհը Ղարաբաղից ստանում է հետևյալ տողերը. «Խնդրում ենք ձեզնից խնայել Ղարաբաղի հայ ժողովրդին, որը սպասում է ձեզ գիշեր-ցերեկ... Հունվար 3, 1921թ.» (Նժդեհ 1999, 96): Հունվարի կեսերին Նժդեհի հրամանով Ղարաբաղ անցած սյունեցիների առաջին զորամասի աջակցությամբ տեղի ապստամբները օրերի ընթացքում մաքրում են բոլշևիկներից ամբողջ Դիզակը: Մի քանի օր անց, կարմիրները, պարտված, տեղի են տալիս նաև Վարանդայի շրջանում և քաշվելով դեպի հարավ՝ ամրանում են Հադրութում: Մարտի 8-ին խորհրդային զորքերը կորցնում են Ղարաբաղում ունեցած իրենց վերջին հենակետը: «Մերոնց ճակատային մի խիզախ գրոհից հանկարծակիի եկած՝ թշնամին խուճապով փախչում է դեպի Ջիբրայիլ, թողնելով հարյուրավոր սպանված, 150 գերի, գնդացիրներ, հացի պաշար, և այլն: Այսպիսով, Լեռնային Ղարաբաղը թոթափում է սովետական լուծը և միանում Սյունիքին» (Նժդեհ 1999, 96):

Ղարաբաղի այս հաջողություններին, սակայն, հաջորդում է Վրաստանի խորհրդայնացումը, որը միանգամայն հուսահատեցնում է ղարաբաղցիներին: Վրաստանում և Երևանում իր նոր հաջողություններից հետո, հակառակորդն ուժերն ուղղեց Սյունիքի և Արցախի դեմ՝ փորձելով նախ ոչնչացնել Դիզակի հայկական զորամասը: Ղարաբաղի էքսպեդիցիոն զորամասի պետ Տեր-Պետրոսյանը 1921 թ. ապրիլի 8-ին Գ. Նժդեհին գրում էր. «Ես նույնիսկ կասկածում եմ, որ մենք կարողանանք այստեղից ապահով դուրս գալ», իսկ ապրիլի 12-ի գրությամբ տեղեկացնում. «Կամուրջը քանդված է, հաղորդակցությունը կտրված, կռիվները սկսված» (Նժդեհ 1999, 96–97):

Ապրիլի 15-ին հակառակորդը փորձեր կատարեց սեպաձև թաղվելու Ղարաբաղի և Սյունիքի միջև. «...Նա ոտքի հանեց Դիզակի և Զաբուղի միջև ապրող թրքությունը: Վերջինը ապրիլի 7-ից սկսած թշնամական գործողություններ սկսեց

6 Թևան Աղաջանի Ստեփանյան (1892–1941)-հայ ազգային ազատագրական շարժման անձնվեր գործիչ: Ծնվել է Հադրութի շրջանի Տումի գյուղում, 1920–1921 թթ. Ղարաբաղում գլխավորել է բոլշևիկների դեմ ապստամբությունը: 1941 թ. խորհրդային իշխանությունների կողմից դատապարտվել է գնդակահարության:

մեր դեմ: Նա պարբերաբար խորտակում էր Զաբուղի կամուրջը, հարձակվում մեր քարավանների վրա, կտրում էր գիծը: ...Վաղուց է ինչ անհանդուրժելիորեն ծանրացել էր դրությունը, բայց և այնպես պետք էր դիմանալ Ղարաբաղում, մինչև որ կպարզվեր Երևանի դրությունը», — գրում է Նժդեհը (Նժդեհ 1999, 97):

Ղարաբաղից տեղեկացնելով հայկական վաշտերի ծանր դրության մասին՝, Նժդեհից խնդրում են շուտափույթ օգնություն: Գ.Նժդեհը շտապով վերադառնում է Տաթև՝ կազմակերպելու Ղարաբաղում պաշարված զորամասին օգնության հասնելու գործը: Ապրիլի 18-ի գիշերը բուն Զանգեզուրի ուժերը հրամանատար Գարեգին Ամիրջանյանի ղեկավարությամբ անցնում են Զաբուղը, գրավում Չինարլու, Մագութու, Բալդրղան, Թուրաբի թուրքական գյուղերը, ճեղքում Կարմիր բանակի պաշարման գիծը՝ հնարավորություն ստեղծելով հայկական վաշտերի համար՝ անկորուստ անցնել Սյունիք (Նժդեհ 1999, 100):

1921թ. մայիսի 12-ին Սյունիք է հասնում բոլշևիկյան մի նոր պատվիրակություն Արտաշես Կարինյանի գլխավորությամբ, որի մեջ էին նաև հայտնի հայ մտավորականներ Ադոն և Դավիթ Անանունը, իսկ 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության կողմից՝ ռազմական կոմիսար Ս.Մելնիկովը: Բանակցությունները տեղի են ունենում Սիսիանի Կալաջուղ գյուղում (Խուդավերդյան 1988, 165): Խորհրդային ներկայացուցիչները պահանջում էին հպատակություն, վերականգնել դաշտաբնակ ադրբեջանցիների քոչի դրությունը դեպի Ղարաբաղ-Զանգեզուրի լեռնային արոտավայրերը և այլն, զանգեզուրցիք լսել անգամ չէին ուզում այդ մասին (Վրացյան 1993, 599): Գ.Նժդեհն այս անգամ Սյունիքի և Արցախի հետ միասին պահանջում է կցել Հայաստանին նաև Նախիջևանը՝ «թաթարական երկրորդ «գրպանային Հանրապետությունը», որը օգտվելով իր անկախությունից, պիտի փակեր Հայաստանի դուռը դեպի Պարսկաստան և պիտի շարունակեր գուրգուրել Սյունիքի վրայով Ադրբեջանին միանալու համիսլամական երազը» (Նժդեհ 1999, 131):

Պատասխան չստանալով՝ Կարինյանի պատվիրակությանը ներկայացրած պահանջները հարգել տալու համար Գ.Նժդեհի հրամանով Զանգեզուրի ուժերը՝ փոխսպարապետ Կուռոյի ղեկավարությամբ հունիսի կեսերին ռազմական գործողություններ են սկսում Վայոց Ձորում, որն ավարտվում է փայլուն հաղթանակով: Օրդուբադի կողմից, նպատակ ունենալով գրավել Կարճևան-Մեղրի Շիվանի Ձոր գիծը՝ Արաքսի հայկական ափը, և Սյունիքը կտրել Պարսկաստանից, թշնամին մեծ ուժերով ռազմագործողություններ է սկսում Գենվազի դեմ: Այդ ճակատի վրա ևս Գ.Նժդեհի ուժերը արիաբար դիմադրում են և հետ շպրտում թշնամուն: Թշնամին ուժեր է կենտրոնացնում Զաբուղի ուղղությամբ՝ բուն Զանգեզուրի և Գորիսի դեմ գործողություններ սկսելու մտադրությամբ:

Հունիսի 18-ին կարմիրների ուժերը ցրելու նպատակով՝ Գ.Նժդեհը մի փոքր զորամասով անցնում է խորհրդայնացած թուրքական շրջանով դեպի Գորիս: Բարգուշատի թրքությունը, որը մեկ տարի գտնվում էր բոլշևիկների իշխանության տակ, Գ.Նժդեհին դիմավորում է աղ ու հացով և հպատակություն հայտնում, իսկ շրջանի միլիցիական մասերը խուճապով փախչում են դեպի Խանլղը (Նժդեհ 1999, 145): Գ.Նժդեհի զորաբանակները հաղթանակ են տանում բոլոր ռազմաճակատ-

ներում: Որպես հետևանք վերոնշյալ ռազմագործողությունների, հունիսի վերջին, Սյունիք են հասնում երկու վավերագրեր. «ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հայտարարությունը Զանգեզուրի իշխանությանը», և մի դեկրետ, որով Լեռնային Ղարաբաղը կցվում էր Խորհրդային Հայաստանին.

«Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Հեղկոմի դեկլարացիայի և Հայաստանի ու Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների կառավարությունների մեջ եղած համաձայնության հիման վրա, հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղն այժմեանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անբաժան մասը»:

ՀՍԽՀ Ժողկոմների Խորհրդի նախագահ՝ Ա. Միասնիկյան,
քարտուղար՝ Մ. Ղարաբեկյան:
1921, հունիսի 12, Երևան

(Նժդեհ 1999, 149: Ղազախեցյան 2001, 46–47):

1921թ. Հուլիսի 2-ին Նժդեհին մի գրությամբ դիմում է Ատրպատականի հայոց առաջնորդ արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանը՝ խնդրելով զինադադար նշանակել և վերսկսել ընդհատված բանակցությունները: Գ. Նժդեհը հուլիսի 7-ին գրություն է ուղարկում Սովետական Հայաստանի Հեղկոմին, որտեղ մի շարք պայմաններ է ներկայացնում՝ հատուկ անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին.

«...Լեռնահայաստանը պարփակում է իր մեջ ամբողջ Զանգեզուրի գավառը, Լեռնային Ղարաբաղը, Վայոց Ձորն ու Գողթանը: Լեռնահայաստանը իբրև մի վարչական միավոր և Հայաստանի անբաժան ինքնավար մասը, ... ենթարկվում է Հայաստանի կենտրոնական կառավարությանը» (Նժդեհ 1999, 166):

Այնուհետև Գ. Նժդեհը թողնում է Սյունիքը և անցնում Պարսկաստան: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նա Սյունիքից հեռանալու պահին հավատում էր Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու մասին դեկրետին: Գ. Նժդեհը հետագայում դեկրետի մասին գրում է. «Տարիներ են անցել: Խորհրդային իշխանությունը վատորեն դրժել է, Սյունիքի կցումից զատ, իր բոլոր հանդիսավոր հանձնառությունները: Նա թքել է այն կնիքի վրա, որով 1921 թ. հունիս 12-ին վավերացրեց իր զույգ հայտարարությունները՝ Ղարաբաղի և Սյունիքի մասին: Հավատարիմ իր դիվային բնությանը՝ նա շատ շուտ հաստատեց, որ գիտի ստել, խաբել անգամ դեկրետներով» (Նժդեհ 2021, 134):

Գ. Նժդեհը 1937 թ. Սոֆիայում լույս տեսած իր «Իմ պատասխանը» մեծ արժեք ներկայացնող աշխատության մեջ անդրադառնում է Արցախին և նրա ռազմավարական նշանակությանը. «... Լեռնային Ղարաբաղին վերաբերող կարմիր գրությունը վաղուց է մոխրացել, հենց իր գրված ու կնքված օրը: Մեր այդ երկրամասը, որպես քաղաքական կաշառի և պրոպագանդի միջոց, վայրկյանի ռազմավիճակի թելադրանքով, փոխն ի փոխն, խոստացված և տրված է եղել թե՛ մեզ և թե՛ թաթարներին: Այդ իսկ պատճառով, մեր օրով նա ուներ, մի տեսակ, երկտեր վիճակ: Այսօր, սակայն, նա մնում է զատված Հայաստանի մայր տերիտորիայից: Մի անմարդկային, մի դաժան անարդարությամբ՝ խելագար Մոսկվան կտրեց իր մորից

Հայաստանի քաջաքաջ որդու կարոտավառ հայացքը, և դա շղթայեց Ադրբեջանին: «Դու ինքնավար ես», — ասացին ղարաբաղցուն, բայց նրան զլացան Հայաստանին միանալու ազատությունը: Թաթարասիրական հաշիվներով՝ մեր այդ ամենաարժեքավոր երկրամասը դրվեց այնպիսի դրության մեջ, որ Հայաստանը կարիքի դեպքում չկարողանա ռազմագիտորեն օգտվել նրանից, և որ Ադրբեջանը՝ գրավելով Ղարաբաղը, միշտ էլ վտանգած լինի ոչ թե միայն Սյունիքը, այլև՝ ողջ Հայաստանը: Այո՛, Ղարաբաղի օրվա դրությունն ավելի նպաստավոր է թաթար Բաքվի, քան Երևանի համար: Այդպես ուզեց Մոսկվան և այդպես էլ եղավ: Ղարաբաղը թողնելով կղզիացած՝ առանց օրգանական կապի Հայաստանի հետ՝ Մոսկվան մեծապես կտկարացնի Հայաստանի ինքնապաշտպանվելու կարելիությունները: Իսկ մեր երկրի տերիտորիալ մարմից կտրելով Նախիջևան-Շարուրը և հանձնելով Ադրբեջանին՝ նա գիտակցորեն Հայաստանը դրել էր ռազմագիտորեն զինաթափ վիճակի մեջ, թրքո-թաթար կրակների միջև» (Նժդեհ 2021,129–132):

Ամփոփելով՝ պետք է նշել, որ Գ.Նժդեհը կարևոր դերակատարում է ունեցել 1920–1921թթ. Արցախի գոյապայքարում: Նրա մղած ռազմական գործողությունները՝ հօգուտ հայերի, էապես փոխեցին Արցախի ժողովրդագրական նկարագիրը: Գ.Նժդեհը, մինչև տարածաշրջանից հեռանալը, մշտապես ջանացել է, Հայաստանին միացնելով, լուծել նաև Արցախի հարցը: Հեռանալու ժամանակ նա հավատում էր Ղարաբաղը Հայաստանին միացնելու մասին դեկրետին: Գ.Նժդեհի աշխատությունները կարևոր և արժանահավատ աղբյուր են Արցախի պատմության վերոնշյալ ժամանակաշրջանի ուսումնասիրման համար, իսկ նրա Արցախի մասին վերլուծությունները՝ կարևոր կովան Արցախի ռազմագիտական և գաղափարաբանական նշանակությունը հանրության շրջանում տարածելու գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱԼԱՅԱՆ 2002–Բալայան Վ., Արցախի պատմությունը. հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002:

ԲԱԼԱՅԱՆ 2021–Բալայան Վ., Գարեգին Նժդեհը և Արցախահայ պետականության պահպանման հարցը, «Հայոց պատմության հարցեր», 2021, N 1 (22), էջ 34–51:

ԳԵՎՈՐԳՅԱՆ 1991–Գևորգյան Հ., Դրոն, Դրո: Կենսագրական: Հուշեր: Վկայություններ, Երևան, 1991:

ԳԵՎՈՐԳՅԱՆ 2014–Գևորգյան Հ., Դրո, Երևան, 2014:

ԳԷՈՐԳԵԱՆ 1991–Գէորգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը, Երևան, 1991:

ԻՇԽԱՆԵԱՆ 1999–Իշխանյան Եղ., Լեռնային Ղարաբաղ (1917–1920), Երևան, 1999:

ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ 1988–Խուդավերդյան Բ., Ջանգեզուր, Երևան, 1988:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ 2003–Համբարձումեան Ռ., Գարեգին Նժդեհ, Երևան, 2003:

ՀԱՅՐԵՆԻՔ 2007–«Հայրենիք» ակումբ, Առաջաբան, Ազատ Սյունիք. Արնոտ գիրք, Երևան, 2007:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 1996–Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918–1921թթ., Երևան, 1996:

ՂԱԶԱԽԵՑՅԱՆ 2001–Ղազախեցյան Վլ., Նժդեհը Ջանգեզուրում. 1920թ. վերջ–1921թ. հուլիս, Երևան, 2001:

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ 1923–Միքայէլեան Ա., Ղարաբաղի վերջին դէպքերը (մաս Ջ), «Հայրենիք» ամսագիր, 1923, թիվ 12, էջ 118–127:

ՆԺԴԵՀ 1999 – Գարեգին Նժդեհ, Ազատ Սյունիք, Պէյրութ, 1999:

ՆԺԴԵՀ 2002ա – Գարեգին Նժդեհ, էջեր Լեռնահայաստանի գոյամարտից: Գարեգին Նժդեհ. Երկեր, հ II, Երևան, 2002:

ՆԺԴԵՀ 2002բ – Գարեգին Նժդեհ, Ազատ Սյունիք, Գարեգին Նժդեհ. Երկեր, հ II, Երևան, 2002:

ՆԺԴԵՀ 2021 – Գարեգին Նժդեհ, Իմ պատասխանը, Երևան, 2021:

ՍԻՄՈՆՅԱՆ 2017 – Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1917 – 1921 թթ., Երևան, 2017:

ՎՐԱՑՅԱՆ 1993 – Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

Gor Ghazaryan
Yerevan State University
gor.ghazaryan1998@gmail.com

GAREGIN NZHDEH AND ARTSAKH FIGHT FOR SURVIVAL OF 1920 – 1921

Keywords: Artsakh, Syunik, Zangezur, Garegin Nzhdeh, Dro, fight for survival, Artsakh freedom fight.

Garegin Nzhdeh played an important role in 1920 – 1921 Artsakh's fight for survival. His military operations in favor of the Armenians significantly changed the demographic profile of Artsakh. Before leaving the region, G. Nzhdeh always tried to solve the issue of Artsakh by uniting Armenia. At the time of his departure, he believed in the decree to join Karabakh to Armenia. G. Nzhdeh's works are an important and reliable source for the study of the above-mentioned period of Artsakh history. His analyses on Artsakh are important in spreading the military-scientific and ideological significance of Artsakh to the public.

Гор Казарян
Ереванский государственный университет
gor.ghazaryan1998@gmail.com

ГАРЕГИН НЖДЕ И АРЦАХСКАЯ БОРЬБА ЗА ВЫЖИВАНИЕ В 1920 – 1921 ГГ.

Ключевые слова: Арцах, Сюник, Зангезур, Гарегин Нжде, Дро, борьба за выживание, борьба за свободу Арцаха.

Гарегин Нжде сыграл важную роль в борьбе Арцаха за выживание в 1920 – 1921 гг. Его военные действия существенно изменили демографический профиль Арцаха в пользу армян. Прежде чем покинуть регион, Г. Нжде всегда пытался решить вопрос Арцаха путем объединения с Арменией. На момент своего отъезда он верил в указ о присоединении Карабаха к Армении. Работы Г. Нжде являются важным и надежным источником для изучения вышеупомянутого периода истории Арцаха, а его анализы об Арцахе важны для распространения среди общественности военно-научного и идеологического значения Арцаха.